ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-23/1-2»

ք. Երևան «31» հունվարի 2023թ.

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ա. Ավագյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սմարթ Սիստեմ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոտրանսպորտային միջոցների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[18]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[18.1]:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

---

[18] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[18.1] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.
Քֆ-ն մատուցված ծառայության քանակն է:[20]

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[22]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

---

[19] *Կատարողը կարող է հրաժարվել առաջարկված կանխավճարից կամ դրա մի մասից: Ընդ որում կնքվելիք պայմանագրում կանխավճարը սահմանվում է Պատվիրատուի և Կատարողի միջև համաձայնեցված չափով: Եթե պայմանագրով չի նախատեսվում կանխավճարի հատկացում, ապա սույն կետը հանվում է նախագծից:*

[20] *Պարբերությունը հանվում է, եթե ծառայությունը չի վերաբերում ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգմանը:*

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[22] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ

նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:*25*

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն	ՍՄԱՐԹ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա	ք.Երևան,Իսակովի պող.48/41
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011288025	ՀՀ 2050922152301001
ՀՎՀՀ 01223338	ՀՎՀՀ 00180119
	Տնօրեն՝ Տ.Մկրտչյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

25 *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 4-րդ նախադասությունը, իսկ 5-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված N 1
« 31 » հունվարի 2023թ. կնքված
ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-23/1-2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	50111130/502	ներկայացված են ստորև	դրամ	300000	1	Ք. Երևան, Հալաբյան 41/ա	Ծառայությունները կմատուցվեն համապատասխան ժամանակահատվածի համար, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, բայց ոչ ուշ քան 20.12.2023թ.

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա պունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության
Հ/Հ 900011288025
ՀՎՀՀ 01223338

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ՍՄԱՐԹ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ
ք.Երևան,Իսակովի պող.48/41
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2050922152301001
ՀՎՀՀ 00180119

Տնօրեն՝ Տ.Մկրտչյան

/ստորագրություն/
Կ.Տ

հ/հ	SU-1 (տեխնիկական զննման/դիագնոստիկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	1-ին չափ Տոյոտա RAV-4 2.5 /2008թ/ 1 հատ
1	2	3
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումները	
1	Բռնկման համակարգի ստուգում	750
2	Սառեցման համակարգի ստուգում	750
3	Յուղման համակարգի ստուգում	750
4	Արտածման համակարգի ստուգում	750
5	Կցորդման համակարգի ստուգում	750
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	750
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	750
8	Կրադանային փոխանցման տուփի ստուգում	750
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	750
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	750
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	750
13	ABS համակարգի ստուգում	750
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	750
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	750
16	Թափքի վիճակի ստուգում	750
17	Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	750
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումները	0
	1. Շարժիչ	0
1	Շարժիչի հանում և տեղադրում	22500
2	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	26250
3	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	7500
4	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	9000
5	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	7500
6	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	11250
7	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	3750
8	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	3750
9	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	1875
10	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	1500

11	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	3750
12	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	3750
13	Ծնկաձև լիսեռի հղկում	15000
14	Ծնկաձև լիսեռի հանում տեղադրում կամ փոխարինում	7500
15	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	3750
16	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	3750
17	Ծնկաձև լիսեռի ուղղում	11250
18	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	7500
19	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	11250
20	Շարժիչի բլոկի փոխարինում	15000
21	Շարժիչի գլանի փոխարինում (гилзовка)	7500
22	Մխոցի փոխարինում 1 հատ	3750
23	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500
24	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
25	Բաշխիչ լիսեռի խտավուկի փոխարինում	3750
26	Փոկանիվի փոխարինում	3750
27	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	2250
28	Շարժիչի շղթայի փոխարինում	11250
29	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	3750
30	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	3750
31	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	7500
32	Շարժիչի յուղի մղիչի փոխանակում	7500
33	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	11250
34	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	3750
35	Յուղի ծորակի փոխարինում	3750
36	Օդաքաշակ փողրակի փոխարինում	3750
37	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500
38	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	11250
39	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	15000
40	Շարժիչի կափույրի փոխարինում	7500
41	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	7500
42	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	7500
43	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	7500
44	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	7500
45	Ատամնանիվի փոխարինում	3750
46	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	3750
47	Սուխարիկի փոխարինում 1 կ-տ	7500
48	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	11250
49	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	3750

50	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	2250
51	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	7500
52	Շարժիչի յուղի արանքաչափի (ՔՅՏ) իրանի փոխարինում	3750
53	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	7500
54	Շարժիչի գամասեղի փոխարինում	2250
55	Գլխիկի հեղույսի փոխարինում	2250
56	Ծնկաձև լիսեռի հեղույսի փոխարինում	2250
57	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում և տեղադրում	7500
58	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	11250
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	0
59	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	1500
60	Ավտոմեքենայի յուղում	1500
61	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	6000
62	Յուղի պոմպի փոխարինում	18750
63	Յուղի ռադիատորի փոխարինում	7500
64	Յուղի ռադիատորի նորոգում	3750
65	Շարժիչի կոլեկտորի փոխարինում	11250
66	Շարժիչի կոլեկտորի միջադիրի փոխարինում	7500
67	Վառուցքի մոմի փոխարինում 1 կ-տ	2250
68	Վառելիքի նուրբ մաքրման զտիչի փոխարինում	7500
69	Օդի զտիչի փոխարինում	750
70	Սրահի օդի զտիչի փոխարինում	750
71	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
72	Օդի զտիչի փողրակի հանում և տեղադրում	750
73	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	3000
74	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	3000
75	Բոցամուղի կողավորում	7500
76	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	3750
77	Բենզամղիչի փոխարինում	7500
78	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	3750
79	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500
80	Բռնկման կարգավորում	3750
81	CO կարգավորում	3750
82	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500
83	Ղեկավարման բլոկի վերանորոգում	11250
84	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
85	Վառելիքի բաքի մաքրում	7500

86	Օդի ծախսի տվիչի փոխարինում	7500
87	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	7500
88	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	3750
89	Բենզոբաքի բենզամղիչի ցանցի փոխարինում	3750
90	Բենզոբաքի բենզամղիչի ցանցի մաքրում	1500
91	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	3750
92	Տվիչի փոխարինում	3750
	3. Սառեցման և արտածման համակարգ	0
93	Հովհարի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500
94	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
95	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500
96	Ռադիատորի նորոգում	15000
97	Շերտափեղկի փոխարինում	7500
98	Շերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	3750
99	Ընդարձակող բաքի փոխարինում	2250
100	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	1500
101	Ջրի ծորակի փոխարինում	3750
102	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	3750
103	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500
104	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ներառյալ	11250
105	Վառարանի ռադիատորի նորոգում	7500
106	Վառարանի շարժիչի փոխարինում	7500
107	Թերմոստատի փոխարինում	6000
108	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	7500
109	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	3750
110	Գեներատորի փոկի փոխարինում	3750
111	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	3750
112	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
113	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	3750
114	Խլարարի անուրի (хамут) փոխարինում	750
115	Խլարարի ներդիրի փոխարինում	3750
116	Խլարարի կախոցի փոխարինում	1500
117	Հովացման հեղուկի փոխարինում	2250
	4. Կցորդում և ՓՏ	0
118	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	11250
119	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	11250
120	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	11250
121	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750

122	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
123	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
124	Կցորդման երկժանիի փոխարինում	7500
125	ՓՏ-ի հիմնական նորոգում	22500
126	ԱՓՏ-ի հիմնական նորոգում	22500
127	ՓՏ-ի հավաքածուի փոխարինում	11250
128	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	3750
129	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	3750
130	ՓՏ-ի հանում և տեղադրում	11250
131	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	11250
132	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	7500
133	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	7500
134	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	7500
135	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	7500
136	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	7500
137	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	11250
138	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	7500
139	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	6000
140	ՓՏ-ի յուղի փոխարինում	3750
141	ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում	3750
142	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	15000
143	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	15000
144	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	3750
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	0
145	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում	7500
146	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500
147	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում,հավաքում	7500
148	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	7500
149	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	7500
150	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում	7500
151	Բաշխիչ տուփի դիֆերենցիալի փոխարինում	7500
152	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	7500
153	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	7500
154	Բաշխիչ տուփի երկժանիի փոխարինում	7500
155	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	7500
156	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	3750
157	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	3750
158	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
159	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	3750

160	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500
161	Տվիչի փոխարինում	3750
162	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	3750
163	Կարդանային լիսեռի միջին կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
	6. Առջևի և հետևի կամրջակներ	0
164	Առջևի կամրջակի կիսասռնում հանում և տեղադրում կամ փոխարինում	6000
165	Առջևի կամրջակի կիսասռնում առանցքակալի փոխարինում	3750
166	Առջևի կամրջակի կիսասռնում առանցքակալի խտաբուկերի փոխարինում	3750
167	Կամրջակի յուղի փոխարինում	3750
168	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	7500
169	Հետևի կամրջակի կիսասռնում հանում և տեղադրում կամ փոխարինում	7500
170	Հետևի կամրջակի կիսասռնում առանցքակալի փոխարինում	7500
171	Հետևի կամրջակի կիսասռնում առանցքակալի խտաբուկերի փոխարինում	3750
172	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
173	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	3750
174	Հետևի կամրջակի բլոկավորման համակարգի նորոգում	15000
175	Կամրջակի տվիչի փոխարինում	3750
	7. Կախոց	0
176	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	15000
177	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	6000
178	Առջևի անվակունդի առանցքակալների փոխարինում	6000
179	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	6000
180	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	6000
181	Հետևի անվակունդի առանցքակալների փոխարինում	6000
182	Անվակունդի համասեռի և հեղույսի փոխարինում (մեկ անիվի համար)	1500
183	Ձախ կամ աջ հոդակապի խտաբուկերի փոխարինում	3750
184	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	6000
185	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	2250
186	Առջևի զսպանակի փոխարինում	2250
187	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
188	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	1500

189	Ներքին լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
190	Ներքևի լխակի վռանների փոխարինում 1 հատ	3000
191	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	1500
192	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	3750
193	Միջին ձգանի հանում և տեղադրում	3750
194	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	1500
195	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
196	Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	3000
197	Վերևի լծակի հեղույսի փոխարինում	1500
198	Հետևի վերևի լծակի վռանի փոխարինում 1 հատ	3750
199	Գնդե հոդակապերի պատյանի փոխարինում	2250
200	Գնդե հոդակապերի փոխարինում	6000
201	Ծայրակալների հանում և տեղադրում	3750
202	Կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	4500
203	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	2250
204	Հետևի կայունարարի փոխարինում	5250
205	Կայունարարի կալունակի փոխարինում	3750
206	Հետևի զսպանակների փոխարինում	3750
207	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
208	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	3750
209	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
210	Զսպանի փոխարինում	7500
211	Զսպանի վռանների փոխարինում 1 հատ	3750
212	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	750
213	Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում	1500
214	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում 1հատ	3750
	8. Ղեկային մեխանիզմ	0
215	Ղեկասյունակի (ՍՏսՏվՍՈ) հիմնական նորոգում,	18750
216	Ղեկասյունակի (ՍՏսՏվՍՈ) արորիկի փոխարինում	1875
217	Ղեկասյունակի (ՍՏսՏվՍՈ) առանցքային սռնու փոխարինում	7500
218	Ղեկասյունակի (ՍՏսՏվՍՈ) խաչուկների փոխարինում	7500
219	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	3750
220	Ղեկասյունակի պատյանի փոխարինում	3750
221	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	3750
222	Ղեկային մոխանիզմի ղեկասյունակի ամրացման անուրի փոխարինում	3750

223	Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում	3750
224	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	3750
225	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	3750
226	ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում	3750
227	Հիդրոուժեղարարի հիմնական նորոգում, աշխատանքներր	11250
228	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
229	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	7500
230	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	7500
231	Ղեկային ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500
232	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	3750
	9. Արգելակային համակարգ	0
233	Վակումային ուժեղարարի փոխարինում	7500
234	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	3750
235	Գլխավոր գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500
236	Գլխավոր գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով	7500
237	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	7500
238	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում	7500
239	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	5250
240	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	5250
241	Առջևի սուպպորտի վերանորոգում	3750
242	Հետևի սուպպորտի վերանորոգում	3750
243	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	3750
244	Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում	3750
245	Արգելակային փողրակի փոխարինում	3750
246	Արգելակային կոճղակների փոխարինում	2250
247	Արգելակային համակարգի օդահանում	3000
248	Սկավառակային կոճղակների փոխարինում	3000
249	Թմբուկային կոճղակների փոխարինում	3000
250	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	3750
251	Առջևի արգելակային սկավառակի հղկում 1 հատ	3750
252	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	3750
253	Հետևի արգելակային թմբուկի հղկում 1 հատ	6000
254	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
255	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	6000

256	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	6000
257	Ձեռքի արգելակային ճոպանի վերանորոգում	3750
258	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	3750
259	ABS-ի հանում և տեղադրում	7500
260	ABS-ի վերանորոգում	7500
261	Հետևի արգելակների կարգավորում	3750
262	Արգելակային հեղուկի փոխարինում	3750
	10. Էլեկտրասարքավորում	0
263	Գեներատորի հանում, տեղադրում կամ փոխարինում	7500
264	Գեներատորի ստատորի փոխարինում	3750
265	Գեներատորի ռոտորի փոխարինում	3750
266	Գեներատորի լիցքավորման ռելեի փոխարինում	3750
267	Գեներատորի դիոդային կամրջակի փոխարինում	3750
268	Գեներատորի առանցքակալի փոխարինում	3750
269	Գեներատորի փոկանիվի փոխարինում	3750
270	Մեկնարկիչի քանդում արատավորում, հավաքում	7500
271	Մեկնարկիչի խարիսխի փոխարինում	3750
272	Մեկնարկիչի իրանի փոխարինում	3750
273	Մեկնարկիչի բռնիչի փոխարինում	3750
274	Մեկնարկիչի բենդեքսի փոխարինում	3750
275	Մեկնարկիչի ավտոմատի փոխարինում	3750
276	Մեկնարկիչի ռելեի փոխարինում	3750
277	Մեկնարկիչի ածուխների փոխարինում	3750
278	Ազդանշանի կարգավորում	3750
279	Ազդանշանի հանում և տեղադրում կամ փոխարինում	3750
280	Առջևի լապտերի հանում տեղադրում կամ փոխարինում	3750
281	Սարքերի պանելի հանում և տեղադրում	7500
282	Առջևի լապտերների կարգավորում	1500
283	Բռնկման կողպեքի հանում տեղադրում	3750
284	Վառոցքի կոճի հանում տեղադրում	1500
285	Ինդուկցիոն կոճի հանում տեղադրում	3000
286	Վազքաչափի ճոպանի հանում տեղադրում կամ փոխարինում	6000
287	Չափիչ սարքերի հանում տեղադրում	3750
288	Ապակելվացիչի հանում տեղադրում կամ փոխարինում	2250
289	Ապակելվացիչի շարժիչի հանում տեղադրում կամ փոխարինում	3750
290	Ապահովիչների փոխարինում	1500
291	Ապակեամբարձիչների փոխարինում	3750
292	Ապակեամբարձիչների շարժիչի փոխարինում	3750
293	Էլեկտրական տվիչների փոխարինում	2250

294	Էլեկտրական անջատիչների փոխարինում	2250
295	Մարտկոցի կլեյմաների փոխարինում	1500
296	Ակումյատորի դրական էլեկտրոլարի փոխարինում	1500
297	Ակումյատորի բացասական էլեկտրոլարի փոխարինում	1500
298	Էլ/ կոճակի փոխարինում	1500
299	Էլեկտրական շտեյկերի փոխարինում	1500
300	Դռների կենտրոնական փականի հանում և դեղադրում	3750
301	Ազդանշանային համակարգի տեղադրում	3750
302	Մագնիտոլային տեղադրում	3750
303	Վառողքային լարերի հանում և տեղադրում	3750
304	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	7500
305	Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	15000
306	Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	7500
307	Ջրի ցողիչի փոխարինում	2250
308	Բեռնախցիկի փականի փոխարինում	3750
309	Հազոցի փականի փոխարինում	3750
	11. Ավտոմեքենայի սրահ	0
310	Արտաքին հայելիների տեղադրում կամ փոխարինում	3750
311	Դռան փականի փոխարինում	3750
312	Բեռնախցիկի ճոպանի փոխարինում	3750
313	Լամպի փոխարինում	3750
314	Ամրակներ (կլիպս) փոխարինում 1հատ	1500
	12. Այլ ծառայություններ	0
315	Եռակցման աշխատանքներ գին 1սմ (գծ.մ) համար	1500
316	CO զոդման աշխատանքներ գին 1 քառ. սմ-ի համար	1500
317	Խառատային աշխատանքներ գին 1 կտորի համար	6000
318	Փականագործական աշխատանքներ գին 1 ժամ աշխատանքի համար	3750
319	Կոնդիցիոների լիցքավորում	9000
320	Կոնդիցիոների նորոգում	6000
321	Առջևի կամ հետևի անվաբացքի կարգավորում	7500
322	Անիվի հանում և տեղադրում	750
323	Անվադողի վերանորոգում	750
324	Անիվի բալանսավորում	375
325	Անիվի վայց	3750
326	Դիմապակու հանում և տեղադրում կամ փոխարինում	7500
327	Ապակիների թաղանթապատում գին 1քմ	6000
328	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	225
329	Ինժեկտորի լվացում	3750
330	Կափույրի լվացում (заслонки)	2250

	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	
	1.Շարժիչ	
1	Շարժիչի գլխիկ	50000
2	Բարձիկ	10000
3	Շարժիչի գլխիկի միջադիր	15000
4	Շարժիչի միջադիրների կոմպլեկտ	40000
5	Շարժիչի փական դուրս մղող	5000
6	Շարժիչի փական ներս մղող	5000
7	Շարժիչի փականի խտաբուկ	5000
8	Փականի զսպանակ	5000
9	Ծնկաձև լիսեռ	100000
10	Ծնկաձև լիսեռի խտաբուկ առջևի	15000
11	Ծնկաձև լիսեռի խտաբուկ հետևի	15000
12	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	15000
13	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	15000
14	Մխոց	50000
15	Մխոցային օղակներ	35000
16	Մխոցային մատ	10000
17	Ատամնանիվ	15000
18	Ատամնավոր փոկ	[redacted]
19	Շարժիչի կափույր	30000
20	Շարժիչի կափույրի կափարիչ	40000
21	Շարժիչի շղթա	40000
22	Շարժիչի պաշտպանիչ	25000
23	Փոկի ձգիչ	30000
24	Հիդրոձգան	20000
25	Հրիչ	30000
26	Շարժիչի հիդրոհրիչ	30000
27	Շարժիչի կալուն	20000
28	Շարժիչի հանդարտիչ	30000
29	Շարժիչի հոլովակ	10000
30	Շարժիչի հոլովակի առանցքակալ	15000
31	Շարժիչի առջևի կափարիչ	30000
32	Շարժիչի վերևի կափարիչ	40000
33	Շարժիչի վերևի կափարիչի միջադիր	30000
34	Թափանիվ	80000
35	Շարժաթև	15000
36	Ատամնանիվ բաշխիչ լիսեռի	15000
37	Ատամնանիվ ծնկաձև լիսեռի	10000
38	Փոկանիվ ծնկաձև լիսեռի	10000
39	Փոկանիվ	10000
40	Սուխարիկ փականի	5000
41	Գլխիկի բոլտ	5000
42	Ծնկաձև լիսեռի բոլտ	30000
43	Պարկուճ (ՀՈՍՖՕՈ)	6000

44	Քարտեր	20000
45	Փական յուղի տարայի	5000
46	Խուփ ընդարձակման բաքի	5000
47	Խուփ շարժիչի	5000
48	Թաթիկ յուղի մղիչի	5000
49	Բարձիկ փ/տուփի	30000
50	Յուղի մղիչ	45000
51	Միջադիր յուղի մղիչի	15000
52	Յուղի ծորակ	15000
53	Շարժիչի բաշխիչ լիսեռ	50000
54	Բ/լիսեռի կափարիչ	25000
55	Բ/ լիսեռի խտաբուկ	15000
56	Շարժիչի բ/լիսեռի ականոց	10000
57	Շարժիչի բ/լիսեռի երիթակ	10000
58	Ուղղորդիչ վռան	9000
59	Շարժիչի գամասեղ	8000
60	Գլխիկի միջադիր	15000
	2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
61	Յուղ շարժիչի հանքային, 1 լ	2500
62	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լ	4500
63	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լ	6000
64	Յուղման համակարգի լվացման հեղուկ 1 լ	3000
65	Յուղի զտիչ	3000
66	Յուղի պոմպ	35000
67	Յուղի պոմպի շարժաբեր	15000
68	Յուղի ռադիատոր	20000
69	Յուղի փողրակ	15000
70	Յուղի ծորակ	10000
71	Վառոցքի կոճ	10000
72	Արտածման կալեկտոր աջ	30000
73	Արտածման կալեկտոր ձախ	30000
74	Ներածման կալեկտոր աջ	30000
75	Ներածման կալեկտոր ձախ	30000
76	Արտածման կալեկտորի աջ միջադիր	20000
77	Արտածման կալեկտորի ձախ միջադիր	20000
78	Ներածման կալեկտորի աջ միջադիր	20000
79	Ներածման կալեկտորի ձախ միջադիր	20000
80	Վառոցքի մոմ	4000
81	Բենզոբաքի բենզոմղիչի ցանց	5000
82	Բենզոմղիչ	30000
83	Ինժեկտորի բոցամուղ բենզինով շարժիչի	30000
84	Ինժեկտորի բոցամուղ դիզելային շարժիչի	[redacted]
85	Բոցամուղի խտաբուկ	10000
86	Վառելանյութի զտիչ նուրբ մաքրման	20000
87	Վառելիքի կոշտ մաքրման զտիչ	15000

88	Վառելանյութի խողովակ	15000
89	Աքսելերատորի ճոպան	15000
90	Օդի զտիչ	6000
91	Օդի ծախսաչափիչ	30000
92	Օդի զտիչի փողրակ	15000
93	Ջերմաստիճանային տվիչ	20000
94	Յուղի տվիչ	20000
95	Բաշխիչ լիսեռի տվիչ	20000
96	Օդի ծախսի տվիչ	20000
97	Արագաչափի տվիչ	20000
98	Հովհարի տվիչ	15000
99	Ջրի խողովակ երկար	15000
100	Ջրի խողովակ կարճ	10000
101	Ջրի տվիչ	10000
102	Բենզոբաքի տվիչ	10000
103	Մարման ընթացքի կարգավորիչ	10000
104	Ղեկավարման համակարգիչ	10000
105	Պարապ ընթացքի տվիչ	10000
106	Թթվածնի տվիչ	10000
	3. Սառեցման և արտածման համակարգ	
107	Հովհար	50000
108	Հովհարի շարժիչ	25000
109	Հովհարի թևանիվ	15000
110	Ռադիատոր	50000
111	Ընդարձակող բաքի փական	5000
112	Ընդարձակող բաքի փողրակ	10000
113	Ընդարձակող բաք	20000
114	Ռադիատորի փողրակ ներքևի	10000
115	Ռադիատորի փողրակ վերևի	10000
116	Թերմոստատ	15000
117	Ջրի մղիչ	30000
118	Ջրի մղիչի միջադիր	2000
119	Ջրի պոմպի խտաբուկ	5000
120	Ջրի պոմպի առանցքակալ	5000
121	Սառեցման հեղուկ 1 լիտր	3500
122	Չսառչող հեղուկ ապակիների համար	3000
123	Ձգիչ հոլովակի	15000
124	Փոկ մեծ	10000
125	Հովացման համակարգի ռետինե խողովակ	10000
126	Ծորակ	10000
127	Փոկանիվ գեներատորի փոկի	10000
128	Խլարարի ներդիր	10000
129	Խլարարի կախոց	5000
130	Կրոնշտեյն	5000
131	Խլարարի անուր (Խամուտ)	1500
132	Շարժիչ վառարանի	45000

133	Վառարանի ռադիատոր	50000
	4. Կցորդում և ՓՏ	
134	Կցորդման աշխատանքային գլան	
135	Կցորդման գլխավոր գլան	
136	Կցորդման գլխավոր գլանի կալունակ	
137	Կցորդման սեղմող սկավառակ	
138	Կցորդման տարվող սկավառակ	
139	Կցորդման առանցքակալ	
140	Կցորդման ոտնակ	
141	Կցորդման ճոպան	
142	ՓՏ-ի յուղ 1լ	
143	ԱՓՏ-ի յուղ 1լ	[redacted]
144	ՓՏ-ի առջևի խտաբուկ	
145	ՓՏ-ի հետևի խտաբուկ	
146	ՓՏ-ի առանցքակալ	
147	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմ	
148	ՓՏ-ի առաջնային լիսեռ	
149	ՓՏ-ի երկրորդային լիսեռ	
150	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	
151	ՓՏ-ի երկժանի	
152	ՓՏ-ի ատամնանիվ	
153	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	
154	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	[redacted]
155	ԱՓՏ-ի զտիչ	10000
156	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	60000
157	Հերմետիկ	5000
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
158	Բաշխիչ տուփի խցուկ	[redacted]
159	Բաշխիչ տուփի առանցքակալ	
160	Բաշխիչ տուփի ատամնանիվ	[redacted]
161	Բաշխիչ տուփի լիսեռ	
162	Կարդանային լիսեռ	
163	Էլաստիկ մուֆտ	
164	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	
165	Կարդանային լիսեռի խաչուկ	
	6. Առջևի և հետևի կամրջակներ	
166	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	30000
167	Դիֆֆերենցիալի սատելլիտ	30000
168	Տանող ատամնանիվի խցուկ	11000
169	Տանող ատամնանիվի առանցքակալ	15000
170	Դիֆֆերենցիալի առանցքակալ	15000
171	Ձախ կամ աջ կիսասռնու փոշեթիկնոց	10000
172	Կիսասռնի	45000
173	Կիսասռնու առանցքակալ	15000
174	Կիսասռնու միջադիր	6000

175	Կիսասոնու խցուկ	10000
176	Կարգավորիչ տափոդակ	8000
	7. Կախոց	
177	Կրոնշտեյն	5000
178	Աջ կամ ձախ հոդակապ	30000
179	Աջ կամ ձախ հոդակապի փոշեթիկնոց	10000
180	Աջ կամ ձախ հոդակապի խցուկ	10000
181	Անվակունդ	40000
182	Անվակունդի խցուկ	25000
183	Անվակունդի ներքին առանցքակալ	25000
184	Անվակունդի արտաքին առանցքակալ	25000
185	Հետևի անվակունդի առանցքակալ	25000
186	Հարվածամեղմիչի թասակ	15000
187	Զսպանակ	15000
188	Առջևի հարվածամեղմիչ	25000
189	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	10000
190	Հարվածամեղմիչի վռան	10000
191	Ներքևի լծակ	30000
192	Ներքևի լծակի վռան	15000
193	Վերևի լծակ	30000
194	Շկվոռնի	[redacted]
195	Ռեզբավոյ	[redacted]
196	Վերևի լծակի վռան	10000
197	Գնդե հոդակապ	15000
198	Առջևի կայունարար	20000
199	Առջևի կայունարարի վռան	10000
200	Առջևի կայունարարի կանգնակ	5000
201	Հետևի զսպանակ	10000
202	Ճոճանակային լծակի վռան	10000
203	Հետևի ցնցամեղմիչ	25000
204	Հետևի մետաղաձող (շտանգա)	20000
205	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	10000
206	Հետևի անկյունագծային լծակ	20000
207	Անկյունագծային լծակի վռան	10000
208	Զսպակի վռան	[redacted]
209	Զսպակի միջադիր	[redacted]
210	Զսպակի բռնիչ	[redacted]
211	Ծայրակալ	5000
212	Ձգան մեջտեղի	10000
213	Աջ կամ ձախ ձգան	10000
	8. Ղեկային մեխանիզմ	
214	Ղեկային կալուն	70000
215	Ղեկային կալունի առանցքակալ	15000
216	Ղեկային կալունի վերանորոգման կոմպլեկտ	20000
217	Ղեկային կալունի խաչուկ	10000
218	Հիդրոուժեղարարի փոկ	8000

219	Հիդրոուժեղարարի պոմպ	50000
220	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	25000
221	Ձգան մեջտեղի	18000
222	Ղեկային ձող	28000
223	Ղեկային ձողի ծայրակալ	16000
224	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լ.	5000
225	Ճոճանակի վռան	23500
	9. Արգելակային համակարգ	
226	Գլխ. գլան	50000
227	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	30000
228	Վակուումային ուժեղարար	60000
229	Բանվ. գլան	30000
230	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	20000
231	Արգելակային փողրակ	10000
232	Սուպպորտ	30000
233	Սուպպորտի ուղղորդիչ	20000
234	Սուպպորտի մոնժետ	5000
235	Արգելակային հեղուկ	5000
236	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	20000
237	Հետևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	20000
238	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	20000
239	Առջևի արգելակային սկավառակ	30000
240	Հետևի արգելակային սկավառակ	30000
241	ABS-ի տվիչ	15000
242	Ձեռքի արգելակի ճոպան	15000
243	Ձեռքի արգելակի լծակ	10000
	10. Էլեկտրասարքավորում	
244	Գեներատոր	30000
245	Գեներատորի դիոդային կամրջակ	20000
246	Գեներատորի ռելե	26350
247	Գեներատորի առանցքակալ	25000
248	Ստարտեր	60000
249	Ստարտերի ռելե	15000
250	Ստարտերի ածուխ	10000
251	Բենդեքս	15000
252	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	15000
253	Խցիկի լապտերի լամպ	1000
254	Արգելակային լապտերի լամպ	1000
255	Առջևի թարթիչ լապտերի լամպ	1000
256	Հետևի թարթիչի լապտերի լամպ	1000
257	Հետևի լապտերի լամպ	1000
258	Հակամշուշային լապտերի լամպ	5000
259	Առջևի լապտերի լամպ	6000
260	Էլեկտրական անջատիչ	10000
261	Էլեկտրական տվիչ	10000

262	Ապակեմաքրիչ	1200
263	Բռնկման կողպեք	10000
264	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	30000
265	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	20000
266	Վառոցքային լարերի խուրց	10000
267	Վառոցքի մոմի ծայրակալ	2000
268	Վազքաչափ	20000
269	Վազքաչափի ճոպան	10000
270	Դռան կողպեք	15000
271	Ազդանշան	10000
272	Ապակելվացիչի բաչոկ	10000
273	Ապակելվացիչի շարժիչ	15000
274	Դռների կենտրոնական փական	22000
275	Հայելի կողային	30000
276	Դիմապակի	50000
277	Դռան ապակու ամբարձիչ	15000
278	Դռան ապակու էլեկտրաամբարձիչի շարժիչ	25000
279	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր 1 կտորի վերանորգման համար (տանիք, դռներ, բեռնախցիկի փակոց (багажник), առջևի և հետևի թափարգել, առջևի աջ և ձախ թևեր, շարժիչի փակոց (капот) և այլն)	8000
280	1 կտորի վերանորգման (տանիք, դռներ, բեռնախցիկի փակոց (багажник), առջևի և հետևի թափարգել, առջևի աջ և ձախ թևեր, շարժիչի փակոց (капот) և այլն)	18000
281	Էլեկտրական մարտկոց /ակումուլյատոր/ ըստ մեքենայի գործարանային ստանդարտի	30000
282	Ավտոմեքենաների ձմեռային անվադողեր	20000
283	Ավտոմեքենաների ամառային անվադողեր	20000
	Ընդամենը	6973400

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հարկադիր կատարումն ապահովող
ծառայություն
ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչության
Հ/Հ 900011288025
ՀՎՀՀ 01223338

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ՍՄԱՐԹ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ
ք.Երևան,Իսակովի պող.48/41
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2050922152301001
ՀՎՀՀ 00180119

Տնօրեն՝ Տ.Մկրտչյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
«31» հունվարի 2023թ. կնքված
ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-23/1-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	50111130/502	Տոյոտա RAV-4 2.5 /2008թ/ 1 հատ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հարկադիր կատարումն ապահովող
ծառայություն
ՀՀ, ք. Երևան, Հալաբյան 41/ա
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչության
Հ/Հ 900011288025
ՀՎՀՀ 01223338

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ՍՄԱՐԹ ՍԻՍՏԵՄ» ՍՊԸ
ք.Երևան,Իսակովի պող.48/41
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2050922152301001
ՀՎՀՀ 00180119

Տնօրեն՝ Տ.Մկրտչյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
« » հունվարի 2023թ. կնքված
ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-23/1-2 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրությունն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » հունվարի 2023թ. կնքված
ՀԿԱԾ-ԳՀԾՁԲ-23/1-2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն